7 միաբանաւքս, հաստատեցաք սբ Յակոբա կիրակին տաւն սբ նշ-
8 անիս եւ զամէն եկեղեցիքս զպատարագն Աբրահամ վարդապ-
9 ետին առնել մինչ ի կատարած աշխարհի։ Արդ, որ զսբ նշանն
10 յեկեղեցոյս հանէ եւ զայլին՝ ի գրատանէս եւ կամ զայս
11 տաւնս եւ զժամս խափանէ՝ Յուդա եւ սատանա է առաջի Ա՛յ.
12 Եւ կատարողքն աւրհնած են յԱ՛յ եւ սրբոց նորայ։
13 Ի յայս ժամէս, որ գրած է, Գ պատարագ Նանային արարէք
վ(ա)ս(ն) Ա՛յ։

Մանրութիւն.— 1. Աբրահամ վարդապետի խաչը թագավորական է կոչվել ըստ երևույթին Կյուրիկյան տան թագավորներից մեկի շինել տվածը լինելու պատճառով։

2. Հինգերորդ տողում հիշատակվող մատնարկը նորատունկ այգի է, 9 և 10-րդ տողերում այդ մատնարկը կոչվել է այգի «զայլին ի գրատանէս հանէ»։

3. Երրորդ տողում ուշագրավ է աշակերտ բառը (աշակերտ Աստուածածնիս), որ գործ է ածվել սպասավոր-ի փոխարեն։ Այդ բանն առաջ է եկել այն հանգամանքից, որ հնում աշակերտները միաժամանակ իրենց ուսուցիչների սպասավորներն էին լինում։

4. 13-րդ տողը «Ի յայս ժամէս, որ գրած է, Գ պատարագ Անանային արարէք վասն Աստուծոյ» գրված է այլ ձեռքով իբրև հավելված։ Այստեղ «որ գրած է» բառերից պետք է ենթադրել, որ խոսքը վերաբերում է բուն արձանագրության։ Նանային բառը կարելի է կարդալ նաև Անանային, բայց դա անխափան բառը չէ, ինչպես կարծել են Ջալ և Դրիմ, այլ անպայման անձնանուն է, թեև չի ճշտվում, թե Նանան ով է և ինչ մերձավորություն ունի Աբրահամ վարդապետի հետ և ինչու է Աբրահամ վարդապետին հասնող պատարագներից երեքը նրան նվիրվում։

Տարբերություններ.— 1. Ջալ և Դրիմ թվականը ՈԶԳ-ի (1234) փոխարեն գրել են ՈԿԳ (1213)։ Տեղում Ջ գրի գոյությունն անհերքելի է։

128. Գրատան նախագավթի հր պատուհանի տակին

(Լուս. № 81)

Հ ԶԻԴ Հ 1275

Հրատարակված է՝ Ջալ 34, Դրիմ 63, Վիմ 118

1 Մեծ յուսով ես՝ Վարդան քահանա գնե-
2 ցի զԱստմին էգին մինչ ի գրատանն, ՀԵ սպ
3 իմ հալալ ընչիւք եւ տվի հիւրատունն առ-
4 աջնորդութեն հաւր Կիրակոսի և կամակցութ՝ եղբարց։
5 Վարդէվարի յայն գինէն տան ի լերնն։ Ով զէգին հիւրատա-
6 նէն հանէ կամ գինին խափանէ, ՅԺԸ հայրապետաց նզով(ած է)
7 ած է։ Թվին ԶԻԴ։